



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, 21 Դեկտեմբերի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հայ Կաթողիկէ համայնքի Հիւսիսային Ամերիկայի Նորընտիր Առաջնորդին՝ Գերշ. Ս. Միքայէլ Եպսկ. Մուրատեանի այցելութիւնը, որուն կ'ընկերանային համայնքին Լոս Անճելըսի ժողովրդապետ Հոգշ. Ս. Գրիգոր Վրդ. Շահինեան, Մխիթարեան վարժարանի տնօրէն Հոգշ. Ս. Դաւիթ Վրդ. Ղազարեան եւ Տիկնանց Միութեան ատենապետուհի Տիկին Մարիժան Հարմանտայեան: Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ եղան Թեմիս Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազիկեան, Քրեստնթա Հովիտի մեր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Ղեւոնդ Քիւյ. Քիրազեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան:

Գերշ. Ս. Միքայէլ Եպսկ. Մուրատեան առաջնորդական իր պաշտօնը ստանձնած էր աւելի քան երկու ամիս առաջ, յաջորդելով Գերշ. Ս. Մանուէլ Եպս. Պաթազեանի, որ հանգստեան կոչուած էր: Իր պաշտօնը ստանձնելէն ետք, Միքայէլ Եպիսկոպոս առաջին պաշտօնական այցելութեամբ կը գտնուէր Լոս Անճելըս: Ժողովրդապետութիւնը Շաբաթ, 17 Դեկտեմբերի երեկոյեան, ի պատիւ Նորընտիր Առաջնորդին, բարի գալուստի համար «Հրաշափառ»ի արարողութիւն մը կազմակերպած էր Կլենտլի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Առաջնորդ Սրբազանը, ընդառաջելով հրաւերին, ներկայ եղաւ արարողութեան:

Ազգ. Առաջնորդարանի «Սիւլահեան» դահլիճին մէջ ընդունելով հիւր Առաջնորդը, Առաջնորդ Սրբազանը անոր ուղղեց շնորհաւորանքի խօսք, ընդհանուր տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող հոգեւոր, մշակութային եւ կրթական աշխատանքներուն մասին, ապա նաեւ բարի երթ մաղթեց անոր եկեղեցուէր ու ժողովրդանուէր առաքելութեան մէջ: Խորհրդակցութեան նիւթ եղան միջ-յարանուանական գործակցական կապերն ու ընդհանրապէս հայութիւնը յուզող հարցեր: Հիւր Առաջնորդը, իր կարգին, տեղեկութիւններ հաղորդեց Հայ Կաթողիկէ համայնքի կեանքին ու գործունէութեան մասին, Բանատայէն մինչեւ Բալիֆօրնիա:

Հանդիպումի աւարտին, հիւրերն ու հիւրընկալները անցան Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռը, ուր միասնաբար

աղօթքի պահ մը ունեցան: Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը հիւր Առաջնորդին ու ընկերակիցներուն ծանօթացուց Առաջնորդարանի բաժանմունքները, ապա գանոք հիւրընկալեց ճաշով: Հրաժեշտէն առաջ, Առաջնորդ Սրբազանը եւ հիւր հոգեւոր Առաջնորդը յուշանուէրներ փոխանակեցին:

## **PRELATE WELCOMES EPARCH OF THE ARMENIAN CATHOLIC CHURCH OF NORTH AMERICA**

On Wednesday, December 21, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy His Excellency Bishop Mikael Mouradian, the newly named Eparch of the Armenian Catholic Church for the USA and Canada. His Excellency was accompanied by Rector of St. Gregory Catholic Church Very Rev. Fr. Krikor Chahinian, Principal of Mekhitarian School Very Rev. Fr. Tavit Ghazarian, and Ladies Auxiliary Chair Mrs. Marijan Harmandayan. Joining the Prelate were Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Crescenta Valley Church Pastor Rev. Fr. Ghevont Kirazian, and Executive Council Chair Mrs. Rima Boghossian.

Bishop Mouradian was installed as Eparch nearly two months ago, following the retirement of Bishop Manuel Batakian. This was the first official visit of Bishop Mouradian to Los Angeles following his installation as Eparch. On Saturday, December 17<sup>th</sup>, a welcoming reception and "Hrashapar" service was held in his honor at St. Gregory Catholic Church in Glendale, which the Prelate participated in.

The visit began at the "Sulahian" Reception Hall. The Prelate first congratulated Bishop Mouradian on his appointment, then gave an overview of the endeavors of the Prelacy. A discussion was held on collaboration between denominations, and issues of general concern to the Armenian community. Bishop Mouradian also gave an overview of the endeavors and mission of the Eparchy, from Canada to California.

The guests were then escorted to the "St. Dertad and St. Ashkhen" Chapel for a joint prayer. Bishop Mouradian and guests were then familiarized with the departments of the Prelacy, after which they were hosted to lunch by the Prelate.

The visit concluded with an exchange of mementos.